

Ltn
2088

1999

ԱՐԵՎԱՆ.

Գ-11 ԱՐԵՎԱՆ

Ա Բ Բ Ա Բ Տ Ե Ա



Լազարոսի Արքայի Աշխարհ

Լազարոսի Արքայի Աշխարհ

GALOUSTE TER MEKERTCHIAN.

PAR

326.

28 9094



72088-60

ԱԻՐՈՒՑԵԱՆ ԲԵԼԵԲԱԴՐԵՐԻ ԼԵԶՈՒՆ

(La langue des inscriptions cunéiformes de l'Arménie).

Հայաստանում գտնուած բևեռագիր արձանագրութեանց թիւը արդէն մօտենումէ հարիւրին։ Շուլցից յետոյ՝ եւրոպացիների և հայերի մասնաւոր ջանքերով գրանց թիւը հետզհետէ շատացաւ։ Բոլոր լուսաւորուած երկրներում այժմս նաև Ռուսաստանում գիտնականների լուրջ ուշագրութեանն են արժանացել այս՝ համաշխարհային պատմութեան համար առաջնակարգ նշանակութիւն ունեցող՝ արձանագրութիւնները։ «Արարատի» ընթերցողներին տալով՝ Հ. Եղիշէ աբեղայի թարգմանութեամբ՝ Պ. Նիկոլսկու յօդուածը Ռուսահայաստանում գտնուած ուրարտեան բևեռագրերի մասին, ես մի քանի փոքր ծանօթութիւններ էի աւելացրել, որոնցից մէկի վրայ մասնաւորապէս այսօր հրաւիրելու եմ նորից բևեռագրերի վերծանութեան ինդրով զբաղուող գիտնականների լուրջ ուշագրութիւնը²։

1) Յարմար և ճշտագոյն եմ համարում «Աւրարտեան» բառի գործածութիւնը քան թէ «Վանեան», հայկական, արմենիաք, ալարոգեան, իւալգեան» և այլ անուանակոչութիւնները։ Ասորեստանական բևեռագրերի Աւրարտուն՝ մեր Այրարատը և Արարադը՝ (այս երկու բառերի տարբեր առումներով գործածութիւնը տես Խորենացու մէջ։ Արարադը ըստ Խորենացու վանից հարաւ է. Բուզանդը նոյն երկիրն անուանում է՝ Սարարադ։) աւելի ամփոփ գաղափար է տալիս մեզ՝ գոնէ տեղագրական տեսակէտակց, միանգամայն սահմանելով բոլոր այն նահանգները, որտեղ ցարդ գտնուել են այդ բևեռագրերը։

2) Ելարի արձանագրութեան Զ - դ տողում (Կիկոլսկու հրատ. թ. VI) յիշւումէ այս աշխարհը Է - տի - ունի - նի անուանակոչութեամբ. Ունի



Ինչպէս յայտնի է ուրարտեան բևեռագրերի ոչ թէ ընթերցանութիւնն է գժուար, այլ վերծանութիւնը — բնագրի թարգմանութիւնը: Մինչեւ այսօր գեռ չէ յաջողուել գտնել թէ ինչ լեզուով են գրուած այդ արձանագրութիւնները, կամ գոնէ թէ այդ լեզուն ինչ ընտանիքի է պատկանում, կամ որ ծանօթ լեզուներին ցեղակից է: Ենթազրութիւնները շատ են, իսկ զրական ոշինչ է յայտնի: Հայերէնով վերծանելու փորձերը բոլորովին անյաջող անցան, ոչ ոք այդ մասին ոյլ ևս չէ էլ մտածում Սեմական լեզուներով վերծանելու փորձերը նոյն անյաջողութիւնն ունեցան: Վերջին ժամանակս կարծումէ ին վրացերէնի նմանութիւններ գանել: Այս հէտի վրայ է կանգ առնում և Պ. Կիկոլակն. բայց ոչ մի հմտա վրացագէտ՝ մինչեւ օրս՝ մի որևէ է

կամ Ունի ի նի վերջաւորութիւնը բոլորպին նոյնն է մեր նախարարութեանց և նրանց կալուածական երկիրների ունի վերջաւորութեան հետ: Արփացի հայերը գալով Հայաստան անշուշտ չեն կարող ոչնչացնել յաղթուած ազգի աշխարհների և քաղաքների բոլոր յատուկ անունները, օրոնցից շատերը պէտք է որ պահուած լինէն յաղթող ազգի բերանում և սերնդից սերուեդ աւանդուէին: Աւրարտու (Արարտ), Բիայնա (Պան), Տուշպա կամ Տուսպա (Տոսպ), նոյնպէս և թագաւորների կամ դիցազունների անունները՝ ինչպէս Արամէ (Արամ), Սենուաշ կամ Սենուաս (Սանաւազ) ելն գեղցից և դրական ապացոյցներ են այս բանին: Աւստի և ակներեւ է այն մեծ կարևորութիւնը, որ պէտք է տալ մեր պատմութեան մէջ պահպանուած հին, վաւերական (յատուկ) անունների և բևեռագիր արձանագրութեանց մէջ յիշուածների մրմեանց հետ բաղդատութեանը: Այս բաղդատութիւնից կարող ենք մենք մեծ լոյս սպասել սեպաճեւ յաւշարձանների շատ մուլթ հէտերը ըստ կարելոյն պարզաբանելու համար: Միայն թէ այս բաղդատութիւնները պէտք է լինին մեծ զգուշութեամբ և եթէ հնարաւոր է՝ պատման ապացոյցներով: Աւսենալով շղթայի երկու ծայրը պէտք չէ անուշագիր թողնել միջի միաւորող օղակները, որոնք ձգուելով դարերի երկայնութեամբ կապում են չեռաւոր անցեալը (մօտ 2500 տարուայ): Ներկայիս հետ: Այսպիսի պատմական ապացոյց մենք չենք գտնում: Օրինակ, հին Կուլիսինի և այժմեան Կուլիսան անունների մէջ: Մենք չգիտենք թէ մի կամ մի քանի գար մեղնից առաջ կամ արգեօք այդ Կուլիսան անունը, որ կարող է բոլորպին պատահական նմանութիւն ունենալ հին Կուլիսինի անուան հետ: Սեղ աւելի հիմնաւոր

գրուկան նմանութիւն չէ գտել վրացերէնի և ուրարտեան բևեռագրերի լեզուին մէջ: Եղած նմանութիւնները բոլորը արտաքին և պատահական են: Աւելի նորագոյն են ուսուցչագետ կեմանի և գոկառը հելքի փորձերը:

Յայտնի ասորեստանագէտ Լեմանը հիմնուելով այն բանի վրայ, որ ուրարտեան արձանագրութեանց մէջ միշտ յիշուումէ իրեւ գլխաւոր աստուած Խալդի՛ն հետեւ ցնումէ, որ Խալդի աստուածոյ ժողովուրդն էլ պիտի լի էին խալդերը. Ֆիշտ այնպէս ինչպէս որ ասորեստանցիք իրենց անունն առել են Ասուր ասաթծուց: Խալդերի կամ Խալդիների բնակուած երկիրը յետին ժամանակներում պիտի լինէր հայ և յոյն գրողներին յայտնի Խաղաղիքը կամ Խաղաղեաց աշխարհը, Մեծ Հայքի հիւսիս - արեւմտքում: Թէ

է թւում մեր պատմական հին անունները համեմատել բևեռագրերում յիշուածների հետ: Այսպիսի մի բաղդատութիւն աւելորդ չենք համարում անել ուրարտական արձանագրութեանց Էտի - ունի անուան և մեր հնագարեան աշխարհներից մէկի - Աւափ - անուանակոչութեան միջև: Մեր հին Աւափն՝ ծանօթ Ե - գ գարի գրողներին և սրանցից էլ առաջ յուներին (Օտեն): ուներ իւր սեպհական ժողովուրդն ու լեզուն - Աւտէացիք - և գրեթէ անմիջապէս կից էր Սևան լճին հիւսիսից, տարածուելով մինչև Կուր գետը: Այժմեան ուտէացիների բնակավայրը աւելի ևս հիւսիսումն է կովկասեան լեռների սոքում նուխույզ մօտ (Նիժ, Աւարդաշէն): Ակներև է որ գարերի ընթացքում այս ժողովուրդը ստիպուած է եղել հետզհետէ գեպի հիւսիսի քաշուելը ուստի և անհաւանական չէ որ նախահայերի ժամանակ այդ ազգն ապրելիս լինէր աւելի ևս հարաւում: այժմեան Էլարի շուրջը: Էլարը նախկին Աւտի նահանգից հազիւ մի քանի տասնեակ քիլոմետր հեռու է: Եթէ ստուգուի Աւտի և Էտի - ունի անունների նոյնութիւնը: այն ժամանակ պէտք է ենթագրել որ Աւտէացիքը Սևանի հարաւային ավերերից տեղափոխուել են ոյն այդ լճի հիւսիսային զառիվայրերը պատմութեան ընթացքում հետզհետէ քաշուելով գեպի կովկասեան մեծ շղթան: կամ թէ ոչնչանալով հարաւային նահանգներում: Այս համեմատութիւնը կարեոր է կացուցանում նոր ուշագրութիւն գարձնել ուտէացիների մնացորդների բարբառի վրայ և որոնել թէ արգեօք ունի՞ որ և է կապ այդ բարբառը ուրարտեան արձանագրութեանց լեզուին հետ:

ինչպէս Ուրարտուի բնակիչները քաշուեցան կամ քշուեցան այդ հեռու հիւսիսում ընկած լեռնային երկրը՝ կարելի է այս կամ այն վարկածով բացատրել: Բայց սրանով էլ ուրարտեան արձանագրութեանց վերծանութեան գործը մի որ և է զգալի յառաջադիմութիւն չէ անում: Ընդունելով անգամ որ Խաղարք աշխարհի անունը և արձանագրութեանց Խաղի աստուծոյ անունը իսկապէս կապ ունին միմեանց հետ և դրանց նմանութիւնը զուտ արտաքին կամ պատահական չէ, այսուամենայնիւ մեզ բոլորովին անծանօթ է մնում Խաղտեաց աշխարհի բնակիչների լեզուն, որ գլխովին անհետացել է:

Ուստի աշխարհի և բեեռագրերի Ետի-ունի անունների բաղդատութիւնից 1) ես այն հետեանքին էի եկել, որ ուտէարէնը, որ մինչեւ օրս էլ գեռ պահպանել է իւր գոյութիւնը՝ պէտք է ուսումնասիրել և տեսնել թէ յունի արդեօք նա որև է կապ, որեւ նմանութիւն ուրարտեան արձանագրութեանց լեզուին հետ: Ուրարտու երկրում կամ չին չայսաստանում թէ և յիշում են շատ ցեղեր և զանազան անուններով ազգեր, բայց անհաւանական չէ որ այդ տարբեր տարբեր ազգութիւնները իսկապէս ցեղակից էին և խօսումէին նոյն լեզուի զանազան բարբառներով: Ուտէարէնն էլ, եթէ միայն ուտէացինները բեեռագրերի Ետիունի երկրի նախկին բնակիչներն էին, պիտի լինի այդ բարբառներից մէկը, և մօտ ազգակից բեեռագրիր արձանագրութեանց լեզուին:

Այս իսկ մտածողութեամբ առաջնորդուած ես բոլորովին մի կողմ թողի հայերէնով բացատրելու նոր փորձեր անելու միտքը, մանաւանդ որ նոյն լոկ հայէտէան առջեւնելի վրայ հիմուած կարելի է ապացուցանել, որ մենք չայսաստան ենք եկել համեմատաբար ուշ և նաև այն, որ մեր նախնիքը գեռ երկար ժամանակ պահպանել էին իրենց յիշողութեան մէջ նախահայերի, այն է չայսաստանի նախկին բնակիչների — բեեռագրիր արձանագրութեանց գրողների — յիշատակլը²⁾:

1) Տես նախընթաց ծանօթութիւնը:

2) Նորենացու մէջ շատ պարզ յիշատակութիւն կայ նախահայերի մա-

Այսպիսով ինձ անհրաժեշտ երեեցաւ չբաւականանալ միայն ուրիշների ուշադրութիւնը ուտէարէնի վրայ հրաւիրելով, այլ հարկ համարեցի նաև անձամբ փորձել ուտէարէնի հետ ծանօթանալ և տեսնել իմ ա priori վարկածի հաւանականութեան չուփը: Թէև ոռու և հայ հրատարակութեանց մէջ ինձ յայտնի էին մի քանի կիսատ և աննշան փորձեր ուտէարէն լեզուի նմուշների, բայց լաւագոյն համարեցի կենդանի բարբառին ծանօթանալ, մանաւանդ որ բարեբաղդաբար էջմիածնում վեհ: Կաթուղիկոսի գալստեան առթիւ կար մի ուտէացի, Պ. Ս. Սողոմոննեանց, մի ուրիշն էլ ճեմարանում՝ Պ. Ա.ռաքել Մնացականեանց: Հետախուզութիւններս խրախուսիչ հետեանքների հասցրին ինձ: Սակայն փոքր ինչ աւելի շատ նիւթ ժողովելու և բաղդատութեանց համար կարեւոր ատաղձը շատացնելու համար մտադիր էի ձեռք բերած եղրակացութիւններս շատ աւելի ուշ հրատարակութեան յանձնել:

Ոին, և այն շատ անգամ: Ակներե է, որ հայերը եւ գ գարում Յ. Ք. դեռ չէին մոռացել իրենց առաջին արշաւանքները, և զրոյցների մէջ պատմումէին անցեալից: Նախահայերի գիւցազն և քաջ թագաւոր Արամը մտաւ հայերի ազգային վէպի մէջ Հայկի և Տիգրանի մէջտեղում: Երկու ազգերի՝ Հայերի և Նախահայերի՝ աւանդութիւնները ձուլուեցան: Չնայելով Խորենացու, կամ լաւ ևս նրա աղբիւրի, բոլոր Զանքին՝ ցոյց տալ՝ որ Հայսաստանի առաջին բնակիչները հայերն են եղել, այսուամենայնիւ ժողովրդական զրոյցը տեղ տեղ կարողացել է սպրդել պատմութեան մէջ և վկայել նախահայերի գյուղութեան մասին: Ուստի և շատ հասկանալի է թէ նրանք՝ նախահայերը՝ ինչու համար սակաւ, ցը ու ած, ցան և ցիր եղած են նկարագրուած և ինքնակամ հնացան գուած են համարում: Հայերին: Մինչև իսկ՝ նախահայերի գյուղութիւնը սքանչելի, տարօրինակ բան է թւում այն պատմագրին, որն անպատճառ ուզումէր Հայկին կապել աշտարակաշինութեան հետ և հայերին համարել ուղղակի: Բարելոնից եկած առաջին ժողովուրդը: Մի տեղ էլ նախահայերը անուանում են « Հինքն Արամազնեայք», Շատ նախարարներ էլ համարում են այդ հներից կամ ուրիշ շներից սերուած, ինչպէս օրինակ Սլկունիները: Աչա Խորենացու այն հատուածները՝ որտեղ յիշատակութիւն է լինում նախահայերի մասին, Ա. Փ. « Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի գաշտավայրի, յ ո ու մ

Բայց ինչպէս զրեթէ միշտ պատուհումէ այս տեսակ դէպքերում իմ՝ ուտէարէնի և ուրարտեան լեզուների համամտութիւնից ձեռք բերած զրական հետեանքների լուրը մեծացրած չափերով սկսուեց նեղ ընտանեկան շրջանից տարածուել գորումինչեւ իսկ անցեալ Արտաստում։ (թիւ թ.-ի երես 8.) սպրդել էր Հ. Եղիշէի մի ծանօթութեան մէջ իբրև արդէն դրա-

ս Փ կաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադար եալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդտուն քնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արմենակայ։ Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցու։

— Ծինէ և զիւղ մի և անուսնէ յիւր անոն Հայկաշէն։ Յիշի և աստանօր պատմութիւնու։ (ի) Հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայն անստիւ միով լերամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք՝ ինքնակամ հնազանդ ելուցադին ն։ Արդարացուցանէ և այս զասցեալ զրոյցու անգիրու։

Ա. ԺԱ. (Հայկ) աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս արաքաջս և աղեղնաւորս թուով յոյժ նուազունս և զայլ ևս որ ընդիւրով ձեռամբ։

Ա. ԺԲ. Բայց սքանչելի իմն առէ պատմագիրն, թէ ի յոլով տեղիս գտան բնակեալ ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր սակաւք՝ յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ։

Ա. Զ. Բայց առաւել յաճախագոյն հինքն Արամազնեալ այք ի նուազս բարուան և յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակօք եւ այսոքիկ զրոյցք սուրտ և կամ թէ արդարեւեալք՝ մեզ չէ ինչ փոյթ։

Բ. Գ. Ի ժամանակին յայնմիկ թագաւորեցուցանէ (Արշակ) զեղբայր իւր Ապարշակ մերոյ աշխարհիս զհիւսիս և զարևմուտս տալով նմասահմանս։ Սա, որպէս յառաջնում մերում մատենին գրեցաք, այր քաջ և խոչեմ՝ ընդարձակեաց ի վերայ սահմանաց մերոց. և կարգս կենցաղականս, որչափ մարթ էր, սահմանեաց աշխարհիս. և նախարարութիւնս և նոցին նախարարութեանցն նահապետութիւնո հաստատեաց զարս պիտանիս (կամ պատանիս), որ ի զաւակաց նախնւոյն մեր(ոյ) Հայկայ և յայլոց։

պէս ձեռք բերուած հաւաստիք¹⁾: Այս իսկ պատճառով հարկ համարեցի թիւրիմացութեանց տեղիք չտալու համար այժմէն և եթ հրապարակ հանել իմ ձեռք բերած հետեանքների գոնէ գլխաւոր կէտր։

Ուրարտեան բենապագրերով զբաղուղներին քաջ յայտնի է, որ Գիյորի որամիտ բաղդատութիւններից ի վեր (1880 թ.) ամենահաստատուն բանը որ մենք գիտենք այս բենապագրերի վերծանութեան խնդրում՝ այդ բայերի կատարեալի ձևն է՝ ի վերծանութեամբ (եղակի առաջին դէմք): Օրինակները շատ և շատ են, ինչպէս՝ Առաքելի, Առաքելի, Խառաքելի և լուսական պարագաներ առանց բացառութեան համաձայն են ինձ ծանօթ բոլոր բենապագէտները: Ուստի և պարզ է որ այս կէտմ էր լինելու իմ հետախուզութեանց առաջին գործը, մանաւանդ որ բառերից աւելի հաստատուն և տեական են մի լեզուի մէջ քերականական ձևերը: Այսպէս օրինակ՝ Գրեցի, Խոնցի, հարդ ցի, Տողնեցի և լուսական պարագաներ առանց բացառութեան 1500 տարի: Ուրեմն նոյնը կարող էր պատահել և ուտէարէնում։

Առաջին նախադասութիւնը որ ես առաջարկեցի Պ. Սոլոմոննեանին թարգմանել հետեալին էր. Այս տունը լինեցի:

Ուտէարէն. Մէ կուախ սէրզուրի
այս տունը շինեցի:

Իմ վրաս շատ տարօրինակ տպաւորութիւն արաւ հենց այս առաջին եւ նու Շուարած մնացի կարծելով որ Պ. Սոլոմոննեանը գիտէ իմ հարցասիրութեան նպատակը և կատակ է անում։

Բ. Ը. Այլ մուացաք և զդժնեայ Սլաքն անուանեալ այր, զոյ ոչ կարեմ հաւաստեալ ասելի հայկայ եթէ յառաջագունից քան զնա եղելոց յաշխարհը հին զոյցքն պատմեն լինել բայց էր այր քաջ։

1) Այդ ծանօթութեան մէջ ասուած է «...որովհետեւ գեռ Ուտէացւոց լեզուն» որը աւելի նման է այն (բևեռագիր) արձանագրութեանց լեզուին, որը աւելի նման է այն (բևեռագիր) արձանագրութեանց լեզուին:

Բայց յարգելի պարոնը բւեռագրերի և նրանց լեզուի մասին
և ոչ իսկ հեռաւոր գաղափար ուներ:

Երկրորդ նախադասութիւն. առի այս քաղաքը՝ քանդեցի:

Ուտէարէն Ա.ծիսի մէ շահարտէ. փոսդութի:

Ակներե էր որ այստեղ շահար ֆարսի փոխառեալ բառ է,
մնացածը ուտէարէն:

Բայրմանիւ օդինակներ ապացուցին, ո՞ր ուտէարէն լեզուած էն
վերջաւունեն է կարարեւով և այն ու մետք եղանի առաջն
դէմի, այլ բարձր դէմէրէն նէ եղանի և նէ յոդեանի նուերած (ներ-
գործական բայերի): Թիւն ու գէմքը որոշումնեն բայի միջին
վանկով՝ արմատի և վերջաւորութեան մէջ զրուած գերանունով:

Օ ր ի ն ա կ ն ե ր .

Շինել=սէր—բէսուն
շինեցի=սէր—զու—բի
շինեցիր=սէր—րու—բի
շինեց=սէր—բէ—բի
շինեցինք=սէր—եամ—բի
շինեցիք=սէր—նամ—բի
շինեցին=սէր— զում—բի

Դերան ուններ.

Ես=qու

զու=ուն

նա=շնո (կամ) շէտին

մենք=եան

զուք=վան (=ֆրանս. gn), կամ էվան

նոքա=շնոր

Մորթել=շամ—փէսուն

(փէսուն=բէսուն)

մորթեցի=շամ—զու—փի

(փի=բի)

մորթեցիր=շամ—նու—փի

մորթեց=շամ—նէ—փի

մորթեցինք=շամ—եան—փի

մորթեցիք=շամ—նան—փի

մորթեցին=շամ— զուն—փի

Այս և որա նման բազմաթիւ օրինակներից երեսումէ թէ ինչ-
պէս է կազմովերապւում բայի կատարեալը չի վերջաւորութեամբ
և գերանունների օգնութեամբ: Սէրզութի խոնարհման մէջ՝ սեր—
շու—բի է փոխանակ սեր—նու—բի ձեի, այլ և լէ փոխանակ
նէ’-ի

ետօ փոխանակ ետօ՞-ի

նոօ փոխանակ նոօ ի:


Բեն և րէ գրերի մերձաւորութիւնը այդ փոփոխութիւնները
շատ բաւարար կերպով արդարացնումեն:

Ուրիշ օրինակներ.

Ցամ—զու—բի=գրեցի

ցամ—նու—բի=գրեցիր

ցամ—նէ—բի=գրեց. և այլն:



Բադալ—զու—բի=փոխեցի

բադալ—լու—բի=փոխեցիր

բադալ—լէ—բի=փոխեց

բադալ—եան—բի=փոխեցինք

բադալ—նան—բի=փոխեցիք

բալդալ— զուն—բի=փոխեցին

Ա.փրէսրի=օրչնեցի և այլն

ափրէնբի

ափրէնէբի

ափրէեանբի

ափրէբէսուն=օրչնել.

ափրէնանբի

ափրէ զունբի

Խախասրի=կոտրեցի և այլն.

Խախանքի

Խախանէքի և այլն.

Խախա= կոտրուած:

աշզուքի=գործեցի

աշնուքի

աշնէքի և այլն

աշ=գործ, աշքէսուն=գործել

Քէսուն (=անել), որ և որոշ տեղերում (սակաւաթիւ) դէսուն, օժանդակ բայով կազմուած բոլոր ներգործական բայերի կատարեալը էն (կամ էն) վերջաւորութիւնն ունի:

Այսպէս ուրեմն՝ առ այժմս տուանց աւելի հեռուն խորամուխ լինելու՝ եղանակացնենք մեր այս յօդուածի գլխաւոր միտքը. Արտարկութեան ազգային ժողովութեանը կազմակերպութեանը է այժմ առաջարկութեանը, միայն առելի ընդունյալ կազմով (կազմակերպութեանը նույն դէմքէն և նույն վայրութեանը): Ուրեմնը միակ լեզուն է մեղ ձանօն, որը նմանութեան այսողութեան մի բնորոշ և դրահան էնք առաջարկանուն արդարութեանը լեզուն էնք առաջարկանուն արդարութեանը լեզուն էնք ***

**) Ծանօթ. Պէտք չէ մոռանալ, որ այժմեան ուտէարէնը մի ազգի ամենափոք մնացորդի՝ ընդամենը հազիւ մի քանի հարիւր տան՝ (նիժ և Վարդաշէնում) բարբառն է, և այն մեծ մասամբ խառն հայերէնի, թուրքերէնի և այլ լեզուների հետ: Ուրեմն և կարելի է երեակայել թէ՝ ենթադրելով հանգերձ որ հին ուտէարէնը էր ուրարտեան լեզուի բարբառներից սէկը՝ ինչ զբութեան և զիճակի մէջ հասած պիտի լինի նամեզ, ըստ բնական օրինաց աստիճանաբար փոխակերպութելով: այլ և այլակերպութելով ուրիշ լեզուների ազգեցութեամբ և խառնուրդով: և մասաւանդ՝ մեծ մասամբ մոռացուելով առ նուազն 2500 տարուայ ընթացքում: Մեր այլանդակուած և օսարխասառն հայ բարբառներից ամենախելքերն անդամ՝ մի հեռաւոր և թոյլ գաղափար միայն կարող են տալ մեզ այդ մասին: Ուտէարէն բառերի մեծ մասը արդէն անհետացած է: Սակայն ինչ որ կայ և մասցել է մինչև այսօր՝ դրանով էլ կարելի էր փորձ փորձել թարգմանելու ուրարտեան բևեռագրերի ընագրերը, հարկաւ փոքր ինչ զօռ տալով երեակայութեան և վարկածների, Տիշտ այնպէս ինչպէս այդ սրուել է մինչև այժմս: Սակայն Մորդ մանի գլխին եկածը մեզ պէտք է խրատ լինի և ես՝ գոնէ առ այժմ՝ բաւականանումեմ այսպիով:

Նի մի քանի խօսք: Իմ ունեցած ուտէարէնի պաշարը թէ և շատ աննշան բան, բայց այսուամենայնիւ տալիս է բաղդատութեան համար բաւական նիւթ: Առ այժմն գիտենք հետևեալը: Նախահայերի մեծ, գլխաւոր աստուածը, որ անպայման յիշատակւում է գրեթէ բոլոր արձանագրութեանց սկզբում չէր կարող որ և է հետաք չը թողնել ուտէայիների մէջ, եթէ միայն սրանք՝ ինչպէս ես ենթագրում եմ՝ նախահայերի մնացորդն են: Գոենավոնից և հայ գասական գրողներից յիշուած Խալտիքը, Խալտեաց աշխարհը, միայն այն պատճառով համարւում է նախահայերի երկիր, որովհետեւ՝ ինչպէս վերևում տեսանք՝ ենթագրուում է մի ներքին կապ Խալդի աստուածութեան անուան և Խալտիքի մէջ: Խալդի պիտի նշանակէն ժամանակում է այսպիսի՝ այս տեսակէտից այս, որ լւաղիքում Խալդանը կամ Խալէր կուլում գլխաւոր քաղաքը, որը Փրկչական թուականի առաջին գարերում՝ Արշակունի թագաւորների ձմերանոցն էր²⁾:

Այժմն էլ կայ Խալսալ գիւղ, Նուխուց հիւսիս-արեւելք, որի ընակիչները արգէն մոռացնել ոն ուտէարէնը և եթէ չեմ սխալւում՝ խօսում են թուրքելէն: Չունի արդեօք Խալսալը կապ Խալդի անուանակոչութեան հետ³⁾:

Ի վերջոյ՝ աւելորդ է ասելն անգամ թէ ո՞րչափ կարեսը եմ համարում: մանաւանդ այսուհետեւ, ուտէարէնի աւելի մօտ և մանրագննին ուսումնասիրութիւնը նոյն իսկ բուն տեղում՝ ուտէացիների մէջ, որով թերեւս գլխովին յեղաշրջուի ուրարտեան արձանագրութեանց վերծանութեան համար մինչև այժմս եղածի մեծ մասը: Եւ կարո՞ղ է պատահէլ որ այս գիտնական առաջնակարգ խնդրի լուծմանը ուտէարէնը ծառոյէ այնպէս, ինչպէս խպտերէնը ծառայեց եղիպտարանութեան:

4) Հայկ անունը հանրածանօթ է, որիրեւ աստուածութեան անուն գործ է ածուած Սուրբ Գրքի մէջ Խորենացուց շատ առաջ:

5) Տես Ագաթանգ. Վենետ. 1835. եր. 37. « . . . յանդիման եղել թագաւորին Խորովու յԱւտի գաւառի, ի Խալսալ քաղաքի, ի ձմերոցս աբբայութեանն Հայոց »:

6) «Քալ» այժմեան ուտէարէնում նշանակումէ մեծ, քալքալ ա-

Նախահայերը մի մեծ և տարածուած ժաղովուրդ էին: Մի ժամանակ նրանք կարողացան մաքառել և մրցել յաջողութեամբ տիեզերակալ Ասորեստանցիների հետ: Նրանք տարածուած էին Հայաստանի երեք մեծ լճերի՝ Վան, Սևան և Աւրմիայի՝ աւաղանսրում: Հիւսիսային սահմանը հասնումէր Կարին, արևմտեանը մինչև Եփրատ: Նոր արձանագրութիւններ երեան գալով կարող են գեռ աւելի էլ ընդարձակուիլ այդ սահմանները: Այսպիսի մի մեծ ժաղովուրդ, որը իւր ժամանակուայ քաղաքակիրթ ազգերիցն էր, չէր կարող բոլորովին անհետ կորչել: Խաղաղը՝ աւելի ևս Աւտին՝ թւումեն լինել նրանց վերջին կայարանները:

Կայ և մի երրորդ աշխարհ՝ ուր՝ ինձ թւումէ թէ՝ պէտք է որոնել ուտէացիների հետքեր¹⁾: Այդ երկիրը ծոփաց աշխարհն է, Հիւն-Հայաստանի սահմանագլուխներից մէկը: Մարութայի վկայաբանութեան մէջ²⁾ Նփրկերսի գաւառը կոչւումէ Ոտայեցւոց աշխարհ՝ ինչպէս որ Մարութան էլ թարգմանուումէ՝ մար—Ուտայ, այն է՝ տէր-Ուտայ: Այստեղի ուտայեցիք երեկի ասորացած էին, ծիշտ այնպէս՝ ինչպէս հիւսիսում—Ուտէ աշխարհում—Հայացան: Հսուոն Ալիշան մեղ թւումէ թէ իրաւամբ Տրդատի ժամանակ միշուած Օտայ: Ոտայ կամ Աւտայ նախարարի անունը նոյնացնուումէ այս աշխարհի անուան հետ: Մանաւանդ որ այդ Ոտայ նախարարը, ըստ վկայութեան Խորենացու, նախահայերից սերուած Ալկունիների ազգակից էր և կոտորածից խուսափող Ալկունիները փախան ապաստանելու Ծոփաց աշխարհ³⁾: Աւկայն հազիւ թէ Ոտայ նախարարը (Ոտայ անունը Խորենացին գործ է ածում իր-

թև մարդու անուն) Ամատունի լիներ, ինչպէս պնդումէ պատմահայրը: Ագաթանգեղոսի մէջ Ոտայի Ամատունի լինելու մասին ոչինչ չկայ, իսկ Խորենացու աղբիւրը այս կէտում կմիայն Ագաթանգեղոսն է⁴⁾:

Այսպիսով ահա բացւումէն մեր առաջ խողարկութեանց նոր աշխարհներ, Հայաստանի ճիշտ հակադիր սահմանադայրերում: Բայց այս բոլորի մէջ այսուամենայնիւ գերակշռող մնումէ՝ Ուրարաւեան լեզուի ուսումնասիրութեան համար՝ Ուտին, ուստիացիք, և մանաւանդ՝ ուտէարէնը:

Աերջին նկատողութիւն: Մարութայի վկայաբանութեան մէջ Նփրկերտը (Մարտիրոսաց քաղաք) ծոփաց երկրումն է, մինչդեռ Փոքրենացու աշխարհագրութիւնը այդ քաղաքը գնումէ սահմանակից Աղձնիքում: Չոր գաւառ է միշտում Խորենացու մէջ Գուգարքի և Ուտէացիների սահմանամիջում (Ա. թ): Չոր անունով գաւառ կայ նաև Աղձնիքի—Ծոփաց սահմաններում: Զգիռում այս Զորերի որի իշխանն է, որ Փաւատոս Բիւզանդից կոչւում է՝ «Դուրութ իշխանն Զօրոց աշխարհին»²⁾, «Դուրութը» աղջատ ընթերցուած է: Փաւատոսի մի քանի մեծ հատուած. Ների իմ նոր օրինակներում³⁾ վիսանակ Գուրութի կորդացւումէ՝ Գուրութ: Գուրութ կամ գուրուտ բառը սյժմեան ուտէարէնում նշանակում է՝ սիւն, գերան⁴⁾: Եթէ Փաւատոսի լիքած Գուրութը ոչ թէ հիւսիսային Հայաստանի Զորքից այլ Աղձնիքի Զորքից էր, ինչպէս որ ես կարծումեմ,⁵⁾ այն

1) Ագաթ. Աւեն. 1835. եր. 167—8: Տե՛ս և Հ. Մարգսեանի «Ագաթ. և իւր բազմ. գաղտնիքն»: եր. 88, ծնթ 2:

2) Փաւատ. Բուզ. Դպր. Գ. գլ. ժր, դպր. գլ. ծ:

3) Երկու պատուական Ճառընտիրներ մեր մատենադարանի, որոնց մէջ գտայ Փաւատոսից ամբողջ գլուխներ, ընտիր ընթերցուածներով, որով ուղղուումն շատ թերատ և աղջատ կտորներ: Ի թիւս այլոց մի նոր և յաջող ընթերցուածով գրապէս ապացուցւումէ, որ Փաւատոսը ոչ մի կապ չունի Սահմանունի իշխանների հետ: Այս մասին գտլ անդամ:

4) Ուտէարէն «ուշ» նշանակումէ փայտ, գուրուտ կամ գուրութ նըշանակումէ գերան, սիւն:

5) Փաւատոսում՝ Գուրութ Զօրոց իշխանը դրուած է Խողացւոց և Խոր-

մեծ ամեծ: Խալ-դի կամ Խալ-դի - նի կարող էր նշանակել Մեծաստուած նախահայերի լեզուում ինչպէս որ կայ նման վերջաւորութեամբ Արդինի աստուածութիւն, նոյն բաեւագիր արձանագրութեանց մէջ: Այս գէպքում հասկանալի կլիներ «Խալ» գործածութիւնը փոխանակ «Խալդի»:

1) Դեռ չեմ խօսում մեր հին աշխարհադրական և նախարարութեանց բազմաթիւ անունների ակներեւ նմանութեանց վրայ, որ ունին նրանք ուրարտական յատուկ անունների հետ:

2) Վկայաբանութիւնը, հատ. Բ. Աւենետ. 1874: Եւ մեր Ճառընտիրները:

3) Տե՛ս Խորեն. Բ. Հէ, ձբ, ձդ՝ «Այրարատ» եր. 194.

Ժամանակ այս անունը իւր ուտէարէն նշանակութեամբ մի նոր ապացոյց կլինի Ուտէացիների և Ուսայեցիների ցեղակցութեան, որ մեզ համար կարեռ նորութիւն է ուրաքանչան լեզուի ուսումնասիրութեան անսակէ տուլ:

ՄԻԱԲԱՆ.

30

Խոռոնեաց իշխանների մէջտեղում: Մի ուրիշ տեղ՝ Փաւստոսն ասումէ:
«զօրն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հ.
յոց Արշակայ և չոգան կացին առաջի արքային պարսկաց Շապհց.
պարիսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Զորայն կոչեն, և զատուցին զիւ-
րեանց աշխարհն ի Հայոց»: Դ. Ճ.

Հեղապահ
1992

ՀՀ Ազգային գրադարան



NL0345704

